IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ Ը

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. *Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:*

Վերլուծենք և հիմնավորենք մասնաճյուղում փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը:

ԵՊՀ ԻՄ-ի արտաքին կապերի հաստատմանն ուղղված ու մասնավորապես միջազգայնացմանն առնչվող գործառույթը հիմնված է ԵՊՀ կանոնադրության, Միջազգային համագործակցության վարչության կանոնադրության, ԵՊՀ 2011-2015 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի վրա:

Հանդիսանալով մայր բուհի միակ մասնաճյուղը՝ կրթօջախն առայժմ օգտվում է ԵՊՀ-ի փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող կանոնակարգերից և ընթացակարգերից: Կարևորելով վերոնշյալ գործընթացները՝ 2012 թ.-ի նոյեմբերից մասնաճյուղում ստեղծվել է տնօրենի գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով խորհրդականի հաստիք: Խորհրդականի հիմնական գործառույթներից է մշակել ոլորտի քաղաքականությունը, իրականացման ռազմավարությունը և ընթացակարգերը:

ԵՊՀ ԻՄ-ի միջազգայնացման ու արտաքին կապերի զարգացմանը նպաստում են 2005 թ-ին ստորագրված Բոլոնիայի հռչակագիրը, ինչպես նաև 2012-13 թթ.-ին երկաստիճան կրթության անցնելը (միայն Կիրառական արվեստ մասնագիտությամբ):

ԵՊՀ ԻՄ-ի 2011-2015թթ. ռազմավարական ծրագրով հիմք ընդունելով Բոլոնիայի գործընթացի հիմնարար արժեքները՝ ուսումնառողի հաջողությունը, անձի բազմակողմանի զարգացումը և մատչելի կրթությունը, մասնաճյուղը ուսումնական ծրագրերի կառուցվածքը և բովանդակությունը, ինչպես նաև ուսումնառության արդյունքի գնահատման չափանիշները, աստիճանաբար համապատասխանեցնում է եվրոպական առաջավոր փորձին:

Ներկայումս մասնաճյուղում մշակվում են կանոնակարգող փաստաթղթային և տեղեկատվական փաթեթների օտարալեզու տարբերակները, որը տեղ կգտնի նաև մասնաճյուղի պաշտոնական կայքէջում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. *ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:*

Վերլուծենք մասնաճյուղի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքների արդյունավետությունը:

Արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածք մասնաճյուղում ստեղծվել է 2015թ.-ի սեպտեմբերին և այս ուղղությամբ սեփական ծրագրեր և

գործառույթներ բուհ-ն առայժմ չի իրականացնում: Մինչ բաժնի ստեղծումը այդ գործընթացները 2012թ.-ի նոյեմբերից Մասնաճյուղում համակարգել է տնօրենի գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով խորհրդականը: Խորհրդականի հիմնական գործառույթներից է ակտիվացնել մասնաճյուղի դեռևս թույլ համագործակցությունը ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության հետ: Չնայած այդ ուղղությամբ դեռևս լուրջ ձեռքբերումներ չկան:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. *ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:*

Ներկայացնենք վերջին 3 տարիներին արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում հաստատության հիմնական նվաճումները, համաձայնագրերի չգործելու պատճառները: Վերլուծենք և հիմնավորենք մասնաճյուղի համագործակցության արդյունավետությունը:

ԵՊՀ-ն միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 50 երկրների 200 համալսարանների, հաստատությունների և միջազգային կազմակերպությունների հետ (Ռուսաստան, Իտալիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Լեհաստան, Գերմանիա, և այլն): ԵՊՀ-ի մասնագետները, ասպիրանտները և ուսումնառողները, ըստ կնքված պայմանագրերի, գործուղվում են ամենատարբեր երկրներ:

ԵՊՀ ԻՄ-ն այս պահին չունի միջազգային ուսումնական հաստատությունների հետ կնքված նմանատիպ պայմանագրեր, սակայն որպես մասնաճյուղ հնարավորություն ունի համագործակցել նշված հաստատությունների և կազմակերպությունների հետ: Ուսումնառության ամբողջ գործընթացն իրականացնելով ԵՊՀ-ի ուսումնական ծրագրերով և հիմնականում ԵՊՀ-ից հրավիրված պրոֆեսորադասախոսական կազմով՝ մասնաճյուղը անուղղակիորեն մասնակցում է ԵՊՀ-ի վերոհիշյալ պայմանագրերով ու համաձայանագրերով նախատեսված գործընթացներին: Ուստի և մասնաճյուղի արտաքին կապերի և միջազգայնացման ծրագրերը, արտաքին կապերի տարեկան հաշվետվություններում արձանագրված արդյունքները, ծրագրերում բարեփոխումներ մտցնելու խնդիրներն առայժմ կարող է դիտարկվել միայն ԵՊՀ-ի համատեքստում:

2014 թ. հոկտեմբերի 10-ին Մասնաճյուղը համաձայնության հուշագիր է ստորագրել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ: Հուշագրում կարևորվում են գիտության և կրթության ոլորտների միջև կապերի ամրապնդման, հայոց լեզվի ուսումնասիրման, ուսուցման և անաղարտության պահպանման, ՀՀ գիտակրթական ոլորտի առաջընթացի խնդիրները:

Մասնաճյուղը պայմանագրեր ունի նաև մի քանի միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ, մասնավորապես՝ «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ»-ի, «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ»-ի, «Դիլիջանի պետական քոլեջ»-ի, «Բերդի պետական քոլեջ»-ի, «Նոյեմբերյանի պետական քոլեջ»-ի հետ (10.05.2012 թ., պայմանագիր N2): Պայմանագրի համաձայն, Քոլեջի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են ուսումը շարունակել Մասնաճյուղի բակալավրատի II կուրսից՝ վճարովի ուսուցման համակարգում: Բացի այդ, Մասնաճյուղը համագործակցում է Քոլեջների հետ՝ ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և վերամշակման աշխատանքներում, տալիս է համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնություն՝ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Միջազգային համագործակցության շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի և ԳՌԵՖ-ի (GREF-Թոշակառու մանկավարժներն առանց սահմանների) ֆրանսիական հասարակական-կրթական կազմակերպության միջև կնքվել է կրթական համագործակցության պայմանագիր: Ծրագիրը նպատակ ունի նպաստել օտար լեզվի դասավանդմանը ԵՊՀ ԻՄ-ում և հարակից գյուղերի դպրոցներում: Կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ դասախոսների և ուսանողների մասնակցությամբ: Այս դասընթացների նպատակն է մշակել ուսումնական ծրագրեր, ուսումնասիրել դասավանդման նոր մեթոդներ, հավաքել դասավանդման նորարական նյութեր, ինչպես նաև հայ դասախոսներին և ուսանողներին իրազեկել Ֆրանսիայի կրթական համակարգին և մշակույթին: Ծրագրին մասնակցում են օտար լեզուների ամբիոնի ֆրանսերեն դասավանդող գրեթե բոլոր դասախոսները:

Արտաքին կապերի զարգացման նպատակով Ֆրանսիայի Վալանս քաղաքի տեխնոլոգիական համալսարանի հետ ստորագրվել է համագործակցության հուշագիր, որի արդյունքում փոխայցելություններ են կատարվում: 2013թ. ապրիլ-մայիս ամիսներին մասնաճյուղի մեկ դասախոս և հինգ ուսանողներ մեկնել են Վալանս՝ փորձի փոխանակման և ուսուցման նոր մեթոդներին ծանոթանալու համար:

Յուրաքանչյուր տարի Խաղաղության Կորպուսի Հայաստանյան գրասենյակին Մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետից դիմում է ներկայացվում կամավոր ուղարկելու նպատակով: Այժմ էլ Մասնաճյուղում աշխատում է Խաղաղության Կորպուսի կամավոր Պամելա ՈՒոտկինսը, նպատակ ունենալով զարգացնել պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների անգլերենի խոսակցական մակարդակը:

Չնայած Մասնաճյուղը չունի արտաքին կապերի հստակ քաղաքականություն, բայց և այնպես, մասնաճյուղի դասախոսները պարբերաբար մասնակցում են միջազգային և հանրապետական տարբեր գիտաժողովների: Բացի այդ, Մասնաճյուղում ևս կազմակերպվում են գիտաժողովներ, որոնց մասնակցում են հանրապետության տարբեր ԲՈՒՀ-երի դասախոսներ:

Ընդհանուր առմամբ, ինչպես երևում է, վերջին 5 տարիների ընթացքում ԵՊՀ ԻՄ-ում նկատելի է դրական տեղաշարժեր միջազգային հաստատությունների և կազմակերպությունների, ինչպես նաև հանրապետության տարբեր ԲՈՒՀ-երի հետ համագործակցություններում: Այս փաստը խոսում է այն մասին, որ ԵՊՀ ԻՄ-ն, օգտվելով մայր բուհի ընձեռած հնարավորություններից, փորձում է կազմակերպել միջազգայնացման և արտաքին կապերի գործընթացը իր հնարավորությունների սահմաններում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 5 տարիների համար:

Աշխատակիցներ	2011		2012		2013		2014	
	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
Դասավանդող	122	18	135	22	112	21	113	29
Վարչական աշխատող	38	5	61	8	60	7	38	15

Օտար լեզուներին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը հինգ տարիների համար										
Ուսանողներ	**2011**		**2012**		**2013**		**2014**		**2015**	
	Քանակ	**%**	**Քանակ**	**%**	**Քանակ**	**%**	**Քանակ**	**%**	**Քանակ**	**%**
Բակալավր	1673	63	1377	52	1535	-	1552	50	1527	66

2015թ.								
	Ռուսերեն		**Անլերեն**		**Ֆրանսերեն**		**Այլ լեզուներ**	
	Դաս.	Վարչ/աշխ	Դաս.	Վարչ/աշխ	Դաս.	Վարչ/աշխ	Դաս.	Վարչ/աշխ
Կարդում և թարգմանում են բառարանով	3%	11%	26%	14%	25%	56%	5%(գերմ) 1%(իտալ) 1%(վրաց)	3%(իտալ) 3%(ադրբ)
Կարդում և կարողանում են բացատրվել	15%	36%	26%	6%	10%	11%	2%(իտալ) 1%(իսպ)	3%(վրաց)
Տիրապետում են ազատ	83%	53%	18%	3%	7%	0%	2%(վրաց) 1%(հուն)	0%

Ներկայացնենք, վերլուծենք և հիմնավորենք վերոնշյալ գործընթացներում հաստատության վերջին 3 տարվա նվաճումները:

2011-14 ուստարիների օտար լեզուների իմացության մակարդակը ԵՊՀ ԻՄ-ի դասավանդողների և վարչական աշխատակազմի համար վերլուծվել է անձնական թերթիկներում նշված տվյալների հիման վրա: 2015 թվականի օտար լեզուների իմացության մակարդակը վերլուծվել է ՄԿՈԱ բաժնի կողմից մշակված հարցաթերթի օգնությամբ: Այդ տվյալների մշակման արդյունքում կարող ենք ասել, որ դասավանդողների 83%-ն ազատ տիրապետում է ռուսերենին, 18%-ն ազատ տիրապետում է անգլերենին, 7%-ն ազատ տիրապետում է ֆրանսերենին: Վարչական աշխատակազմի 53%-ն ազատ տիրապետում է ռուսերենին, 3%-ն ազատ տիրապետում է անգլերենին, ֆրանսերենի տարրական իմացություն ունի 56%-ը: Դասավանդողների մեջ կան գերմաներեն, իտալերեն, վրացերեն, հունարեն լեզուներին տիրապետող դասախոսներ:

ԵՊՀ ԻՄ-ի դասախոսական ու վարչական աշխատակազմի պարտադիր վերապատրաստման հնգամյա ծրագրի շրջանակներում կազմակերպվել է դասախոսների վերապատրաստում, որի արդյունքում գիտակրթական ու վարչական տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ բարձրացրել են անգլերենն ակադեմիական միջավայրում կիրառելու ունակությունը:

Միաժամանակ հարկ է նշել, որ ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ՄԿԾ-ներում առկա է օտար լեզուների դասընթացներ (պարտադիր և կամընտրական), որը նպաստում է ուսանողների իմացության մակարդակի բարձրացմանը:

Օտար լեզուների ամբիոնի դասավանդողները կատարելապես են տիրապետում մասնագիտությանը: Ընդհանուր առմամբ, ԵՊՀ ԻՄ-ի ողջ աշխատակազմի և ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը կարելի է բնութագրել բավարար:

Տնօրենի 15.04.2015թ. N 57 հրամանով Մասնաճյուղում ստեղծվել է անգլերենի ուսուցման կենտրոն: Կենտրոնի հիմնական խնդիրներն են հաստատված ծրագրերով անգլերեն լեզվի բարձր որոկավորում ունեցող դասախոսների միջոցով սկսնակ և ոչ սկսնակ ուսանողների հիմնական կրթական ծրագրերից դուրս ուսուցանումը և բարձրագույն կրթություն ունեցող այլ մասնագետների վերապատրաստումը: Ըստ կանոնակարգի կենտրոնն ունի հստակ ժամանակացույց, ըստ որի իրականացվում է ուսուցումը:

Այսպիսով, ԵՊՀ ԻՄ-ում օտար լեզվի իմացությունը ապահովելու համար ներկայումս ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ, որոնք շարունակական բնույթ են կրում: Հաշվի առնելով միջազգայնացման գործընթացին լիովին ինտեգրվելու ԵՊՀ ԻՄ-ի նպատակադրումը՝ նախատեսվում է այդ միջոցառումների հետագա ընդլայնումն ու կատարելագործումը:

Չափանիշ 9-ի վերաբերյալ ներկայացնենք վերջին 5 տարվա SWOT վերլուծությունը

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
1. Մասնաճյուղում գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով խորհրդականի հաստիքի առկայություն 2. Միջազգային կապերի բաժնի առկայություն 3. Օտար լեզուներ տիրապետող դասավանդողների առկայություն 4. Դասախոսների կրեդիտային համակարգով վերապատրաստման ծրագրի առկայություն 5. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պաշտոնական էլ. կայքի առկայություն	1. ԵՊՀ-ի միջազգային կապերի բաժնի տեղական և միջազգային կապերի օգտագործում 2. Այլ ՄՈՒՀ-երի համապատասխան կառույցների հետ համագործակցություն 3. Համագործակցություն ԵՊՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ծրագրերում ընդգրկված դասավանդողների հետ
Թույլ կողմեր (Weaknesses)	**Վտանգներ (Threats)**
1.Մասնաճյուղի զարգացման ՌԾ-ում արտաքին կապերի և միջազգայնացման նպատակի բացակայություն 2.Մասնաճյուղում արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ կանոնակարգող փաստաթղթերի բացակայություն 3.Մասնաճյուղի պաշտոնական էլ. կայքի օտարալեզու տարբերակի բացակայություն 4.Օտար լեզվով դասավանդվող դասընթացների և ծրագրերի բացակայություն 5.Ուսանողների փոխանակման համաձայնագրերի բացակայություն 6.Օտարալեզու PR նյութերի քիչ քանակություն	1. Տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրադրության փոփոխություններ 2. Ֆինանսական մուտքերի նվազում

Մասնաճյուղի արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ անելիքները շատ են, քանի որ մինչ այժմ, որպես մասնաճյուղ, մասամբ օգտվել ենք ԵՊՀ-ի համապատասխան կառույցների հնարավորություններից: Ներկայումս մշակման փուլում է մասնաճյուղի էլ. կայքի եռալեզու տարբերակը, ինչը կնպաստի արտաքին կապերի հաստատմանը, համագործակցությանը և միջազգայնացմանը: ԵՊՀ ԻՄ-ն բացթողումներ ունի արտաքին կապերի և միջազգայնացման գործունեության ոլորտում, հետևաբար անհրաժեշտություն կա

համապատասխան կառույցի գործունեության ակտիվացման, որն էլ հիմնական քայլեր կանի մասնաճյուղի արտաքին կապերի և միջազգայնացման նպաստող քաղաքականության և մեխանիզմների մշակման, ինչպես նաև օտարալեզու /մասնավորապես ֆրանսերեն, անգլերեն և ռուսերեն/ PR նյութերի հրատարակման և տարածման գործում: